

Գ.Հակոբյան, Մ.Բաբաջանյան

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՐՈՒԹՅԱՆ  
ԱՂԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ**

*«ԳՆ "Հայպերհոդշիննախագիծ" ինստիտուտը*

Հայաստանը սակավահող երկիր է: Հողային վերջին հաշվեկշռով (առ 1-ը հունվարի 1996թ.) բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում. վարելահող՝ 0,13, գյուղատնտեսական հողատեսքեր՝ 0,37 հա, որը 7-8 անգամ պակաս է նվազագույն ապահովվածությունից:

Խիստ սակավահողության պարճառով հանրապետությունը ստիպված է ներմուծելու մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ սննդամթերքների միջազգային առևտրի գծով հանրապետության բացասական սալդոն տարեկան հասնում է ավելի քան 100 մլն դոլարի: Դա, անկասկած, նվազեցնում է հանրապետության գյուղատնտեսության կարգացման, նրա տեխնիկական հագեցվածության բարձրացման հնարավորությունները, որը ստեղծված իրավիճակում անխուսափելի է: Չնայած դրան, սննդամթերքների սեփական արտադրությունը հնարավոր է զգալիորեն ավելացնել արդեն մոտակա տարիների ընթացքում՝ բաց գրունտի հողերի լրիվ և ավելի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսության ոլորտում չօգտագործվող հողատարածքների վրա հիդրոպոնիկոմների կապմակերպման հաշվին:

G.Hakobyan, M.Babajanyan

**ON PROVIDING ARMENIAN POPULATION WITH FOOD**

**Summary**

The consumption of meat, milk and egg is 2,5-4 times lower of the recommended norms in the republic. In the future the lack of food has to be completed at the expense of ground improvement and of hydroponic development. But completely refuse from import of foods is impossible in the near future.